ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 2

II
ՄԱՍ

Անահիտ Արնաուդյան Մարինե Մանուկյան

ՄԱՅՐԵՆԻ

2

II մաս

Նկարիչ՝
Նաիրա Ահարոնյան

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51գ72
Ա 919

Արնաուդյան Անահիտ, Մանուկյան Մարինե
Ա 919 Մայրենի 2: Դասագիրք 2-րդ դասարանի համար /
Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.
Մաս 2.- 96 էջ:

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51գ72

ISBN 978-9939-75-974-6

© Անահիտ Արնաուդյան, Մարինե Մանուկյան, 2023
© Էդիթ Պրինտ, 2023

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Կարդում եմ, խոսում եմ, ուսումնասիրում եմ, դիտարկում եմ, վերլուծում, հասկանում եմ, առաջարկում եմ, ներկայացնում եմ, եզրակացություններ եմ անում, հիմնավորում եմ, ինձ ստուգում և գնահատում եմ:

Գրում եմ, գծում, նկարում եմ, մոդելավորում եմ, վերլուծում եմ, առաջադրանքներ եմ կազմում, մտքերս եմ գրանցում, տվյալներ եմ հավաքում, եզրակացություններ եմ անում, ինձ ստուգում, գնահատում եմ, ներկայացնում եմ...

Խոսում ենք, լսում ենք, մտքեր ենք փոխանակում, կարդում ենք, ուսումնասիրում ենք, դիտարկում ենք, հասկանում ենք, վերլուծում ենք, քննարկում ենք, համեմատում ենք, գաղափարներ ենք փոխանակում, կարծիքներ ենք բարձրաձայնում, քննարկում, հիմնավորում, փաստարկներ ենք բերում, իրար ստուգում ենք, գնահատում ենք, ներկայացնում ենք...

Գրում ենք, գծագրում, նկարում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում, վերլուծում, եզրակացություններ ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, իրար ստուգում և գնահատում ենք, ներկայացնում ենք...

Փոքր (3–4) կամ մեծ խմբով (ամբողջ դասարանով) աշխատում ենք դասասենյակում կամ դասասենյակից դուրս, կարդում ենք, գրում ենք, պատկերավորում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում ու վերլուծում, եզրակացություն ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, ներկայացնում ենք, իրար ստուգում և գնահատում ենք...

Եկե՛ք՝ տանեմ

Մուտքի խոսք

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Հայկական լեռնաշխարհի բարձրաբերձ լեռների գրկում է գտնվում Հայաստանը: Այն աչքի է ընկնում իր պայծառ արևով, կապույտ երկնքով, ինքնատիպ բնությամբ:

Հայաստանում հասունանում են արևահամ մրգեր՝ խաղող, ծիրան, նուռ ու դեղձ:

Հայկական լեռնաշխարհի բուն բնակիչները հայերն են՝ աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը:

Բազմաթիվ ջրվեժներ կան մեր երկրում, որոնցից ամենաբարձրը Ջերմուկի ջրվեժն է՝ Ջերմուկ քաղաքում:

Այս ջրվեժը սկիզբ է առնում բազմաթիվ աղբյուրներից և մոտ 60 մ բարձրությունից երեք գմբեթաձև դարավանդներից թափվում է Արփա գետը:

Հայաստանի Հանրապետության ամենամեծ լիճը Սևանն է: Այն աշխարհի քաղցրահամ

ջուր ունեցող լճերից է: Սևանա լիճ են թափվում քսանութ գետ ու գետակ, բայց նրանից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը, որի ջրերով ոռոգում են Արարատյան դաշտի այգիներն ու բանջարանոցները: Լիճը հայտնի է իր իշխան ձկով:

Խոսրովի անտառը մի հսկա արգելոց է, որտեղ աճում են բույսերի և ծառերի բազմաթիվ տեսակներ: Այդ ծառերից ամեն մեկը մարդու նման իր բնավորությունն ունի, իր սիրած եղանակն ու բնակության վայրը:

Դրանցից շատերը գրանցված են «Կարմիր գրքում»:

Արագածը Հայաստանի ամենաբարձր լեռն է: Գագաթն ունի չորս սուր կատար: Այդ պատճառով էլ այն անվանում են քառագագաթ: Արագածի լանջերից բխում են հարյուրավոր սառնորակ աղբյուրներ: Լեռան վրա գոյացել են գեղատեսիլ լճեր:

Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է: Այն կառուցել է Արգիշտի արքան և կոչել է Էրեբունի: Մինչև հիմա էլ պահպանվել են Էրեբունի ամրոցի մնացորդները:

1. Պատմի՛ր՝ ինչ իմացար Հայաստանի մասին:
2. Պարզի՛ր՝ ինչու են Հայաստանի մրգերն անվանում արևահամ:
3. Ի՞նչ գիտես «Կարմիր գրքի» մասին:
4. Փորձի՛ր բացատրել, թե ինչու է գիրքն այդպես վերնագրված:

5. Ընդգծված բառերի փոխարեն գրի՛ր իմաստով մոտ այլ բառեր.

   պայծառ *արև,* ***կապույտ*** *երկինք,* ***արևահամ*** *միրգ,* ***բազմաթիվ*** *ծառեր*

6. Օգտվելով տեքստերից՝ լրացրո՛ւ.

   •այաապան, •երմուկ, •ևան, •ևևան, •բեբունի, •բազդան, •բագած, •բգիշտի:

   Բացատրի՛ր, թե ինչ նկատեցի՛ր լրացնելիս:

7. Բառերի շարքերն ավելացրու այն անուններով, որոնք դու գիտես:

8. Պատկերված բանջարեղենի և մրգերի անուններն այբբենական կարգով գրիր առանձին սյունակներում:



9. Քննարկեք, պատրաստեք տեղեկություն և ներկայացրեք, թե Հայաստանի որ տեսարժան վայրում եք եղել.

- նշեք վայրի անվանումը,
- ե՞րբ և ո՞ւմ հետ եք եղել այնտեղ,
- ինչո՞ւ եք այն տեսարժան համարում,
- ի՞նչ հետաքրքիր տեղեկություն ունեք դրա մասին,
- ի՞նչն ամենից շատ ձեզ դուր եկավ այնտեղ:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

10. Որոշեք, պլանավորեք, նախագծեք, կազմակերպեք, իրականացրեք:

- Բոլորդ միասին որոշեք՝
  - էքսկուրսիայի վայրը,
  - նպատակն ու հիմնական անելիքները,
  - օրը, ժամը, տևողությունը:
- Ըստ էքսկուրսիայի նպատակի՝ դասարանը բաժանեք «մասնագիտական» խմբերի, օրինակ՝
  - զբոսավարներ
  - լրագրողներ
  - խաղավարներ
  - բնագետներ
  - բնապահպաններ
  - տնտեսվարներ
- «Մասնագիտական» խմբերից յուրաքանչյուրը սահմանված ժամանակահատվածում պատրաստի և քննարկման ներկայացնի իրենց գործողությունների պլանը:

11. Էքսկուրսիայի ավարտից հետո պատրաստեք և ներկայացրեք «մասնագիտական խմբերի» զեկույցները:

Օրինակ՝ այսպես.

- դասարանական թերթի հրապարակում «լրագրողների» կողմից,
- տեսահոլովակներ «զբոսավարների», «խաղավարների», կամ այլ խմբերի կողմից,
- լուսանկարների շարքի, ալբոմների, պաստառների պատրաստում և ցուցադրություն,
- գրավոր շարադրանք անհատական տպավորություն-ների մասին՝ էքսկուրսիայի յուրաքանչյուր մասնակցի կողմից:

Մի պարզ հուշում ցուցադրությունների համար



Հեքիաթային ճամփորդություն

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Սուրեն Մուրադյան



Իմ հայրենիքն իմ մայրիկն է,
Իմ տունն է ու իմ հայրիկն է,
Իմ փողոցն է, իմ դպրոցն է,
Իմ բակն է, իմ ծաղկանոցն է:
Իմ հայրենիքն իմ տատիկն է,
Հեքիաթասաց իմ պապիկն է,
Իմ արջուկն է, իմ ջութակն է:
Իմ փայտե ձին, իմ թութակն է:

Իմ հայրենիքն իմ սահնակն է,
Իմ խաղընկեր, ժիր Սահակն է,
Երկինք հասնող բարդի ծառն է,
Միշտ ձյունապատ Մասիս սարն է:
Իմ հայրենիքն իմ Սևանն է,
Զվարթնոցն ու Երևանն է,
Հեքիաթներն են Թումանյանի,
Հրաշքները՝ Հայաստանի:

1. Ըստ բանաստեղծության՝ ներկայացրու՝ ինչ է հայրենիքը:
2. Շարունակիր միտքը. «Իմ հայրենիքն իմ.....»:
3. Գիտես, թե ինչու է մեր ժողովուրդը կոչվում հայ, իսկ մեր հայրենիքը՝ Հայաստան:

4. Հաշվիր և գրիր, թե քանի հնչյուն և քանի տառ կա նշված բառերի մեջ.

Սևան, Երևան, հայրենիք:

5. Բանաստեղծության մեջ Սահակ, Թումանյան բառերը գրված են մեծատառով: Ինչու՞, ի՞նչ բառեր են դրանք:
6. Գրիր քո անունն ու ազգանունը:
7. Գրիր դասընկերներիդ այն անուններն ու ազգանունները, որոնք սկսվում են քո անվան կամ ազգանվան առաջին տառով:

8. Անվանիր Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանները:

ՀՀ դրոշ

ՀՀ զինանշան



ՀՀ պետական օրհներգ

9. Պատասխանելով հարցերին՝ կազմիր քո «անձնագիրը».

- ի՞նչ է քո անունը .....
- ի՞նչ է քո ազգանունը .....
- ո՞րն է քո հայրենիքը .....
- որտե՞ղ ես դու ծնվել .....
- ո՞րն է քո ծննդյան օրը .....
- որտե՞ղ ես դու ապրում (*հասցեն*).....

10. Համեմատեք այս երկու բնակավայրերը և ներկայացրեք.

- ինչո՞ւ են պատկերված նկարներում:
- ինչո՞վ են նման և տարբեր այս բնակավայրերը:
- համեմատեք այն բնակավայրի հետ, որտեղ դուք եք ապրում:

11. Նկարիր այն տունն ու փողոցը, որտեղ դու ապրում ես:

12. Ներկայացրու՝ օգտվելով բառերի հետևյալ շարքերից.

- ***տուն, շենք, հարկ, մուտք***
- ***պարտեզ, այգի, բակ***
- ***խանութ, դեղատուն, շուկա***
- ***դիմաց, հետևում, առջևում, միջև, կողքին, մոտ, հեռու:***

Օրինակ՝ ***Տան դիմաց մի մեծ ծաղկանոց կա:***

13. Խմբի բոլոր անդամների առաջարկների հիման վրա պատրաստեք ձեր սիրելի մուլտհերոսներից մեկի տան մանրակերտը:

- Գրառեք գործողությունների քայլաշարը:

Հուշում՝ կարող եք օգտագործել.

- կավ, խմոր, ծեփոն,
- տարբեր բնական նյութեր՝ սերմեր, կոներ, չորացած բույսեր, քարեր
- վնասված իրերի, խաղալիքների մասեր:



ԱՆՈՒՇ ԱՆՈՒՆՆԵՐ

Յուրի Սահակյան

Մայրիկն անուշ անուն է,
Մայրենին՝ էլ ավելի:
Հայրիկն անուշ անուն է,
Հայրենին՝ էլ ավելի:

Անուններն այդ անուշ
Մեզ հետ աճում, բարձրանում,
Քաղցրանում են օրեցօր
Ավելի ու ավելի:

1. Ինչ կապ ես տեսնում բառերի հետևյալ զույգերի միջև.

   մայր – մայրենի, հայր – հայրենի:

2. ***Անուշ*** բառին իմաստով մոտ բառ է քաղցր բառը: Համեմատի՛ր տրված նախադասությունները.

   Մայրիկն անուշ անուն է:
   Մայրիկը քաղցր անուն է:

3. Բացատրի՛ր հետևյալ բառակապակցությունները.

   անուշ քուն, անուշ բալիկ, քաղցր ձայն, քաղցր խոսք:

4. Կազմիր և գրիր բառակապակցություններ՝ այս անուններն ավելի անուշ դարձնելու համար.

մայրիկ, հայրիկ, տատիկ, պապիկ, հայրենիք:

5. Գրիր հետևյալ բառերին իմաստով մոտ բառեր.

սիրուն, ուրախ, սպիտակ, զվարթ:

6. Լրացրու բաց թողած տառերը.

□րև, գար□ն, արծ□վ, □նտանիք, ընկ□ր:

7. Տրված բառերը խմբավորիր՝ ըստ «համերի» և բացատրիր, թե ինչու ես այդպես կարծում:

բարև, կիտրոն, լեզու, ծիրան, դեղ, պղպեղ, ժպիտ, խոսք

քաղցր ***թթու*** ***դառը*** ***կծու***

8. Քննարկեք և ներկայացրեք, թե ինչ են պատմում այս նկարները մեր հայրենիքի մասին:

9. Գրի՛ր ընտանիքիդ անդամների անուններն ու ազգանունները:

10. Բացատրի՛ր նմանություններն ու տարբերությունները:

11. Շարունակի՛ր հայկական անունների այս շարքը.

Հայկ, Գայանե, Անուշ, Արմեն...

12. Գրե՛ք կենդանիների ու նրանց ձագերի անունները:

13. Գրեք, թե ինչ է կոչվում այս կենդանիների խումբը՝ «ընտանիքը».

- գայլերի խումբը կոչվում է ոհմակ,
- թռչունների խումբը...
- ոչխարների խումբը...
- ձիերի խումբը...
- խոզերի խումբը...
- կովերի խումբը...

14. Պատրաստեք ձեր դասարանի անձնանունների բառարանը.

- յուրաքանչյուրդ պարզեք ձեր անվան ծագման պատմությունը,
- ներկայացրեք դասարանին,
- հավաքեք այդ տեղեկությունը,
- դասավորեք ձեր անուններն այբբենական կարգով,
- կից գրեք յուրաքանչյուրիդ անվան բացատրությունը:



Բառարան

ՔՈ ՏՈՒՆԸ

Լիպարիտ Սարգսյան

Ճուտը ասաց ճնճղուկ մորը.
- Ձյուն է գալու, ցրտեց օրը:
Ուրիշների նման ինչո՞ւ
Տաք աշխարհ չենք մենք էլ թռչում:
- Ինչպե՛ս ասեմ,- տխրեց մայրը,
Լայն ու մեծ է այս աշխարհը.
Բայց սովոր է միշտ մեր ցեղը
Ապրել միայն ծնված տեղը:
Տանել ձմռան բուքն ու ձյունը
Բայց չլքել իր հին բույնը:
Դու փոքր ես դեռ, կմեծանաս,
Ասածներս կհասկանաս:
Երբ քո տանն ես ցուրտը տանում,
Տունն ավելի է քաղցրանում:



1. Ովքեր են երկխոսության հերոսները:
2. Տարվա ո՞ր եղանակին է տեղի ունեցել այս պատմությունը:
3. Մեկնաբանե՛ք մայր ճնճղուկի պատասխանը:
4. Քո կարծիքով, երբ ճուտը մայր դառնա, նույն խորհուրդը կտա՞ իր ձագին:
5. «Տաք աշխարհ» չվող ի՞նչ թռչուններ գիտես:

6. Շարունակե՛ք երկխոսությունը՝

7. Տրված հատկանիշ ցույց տվող բառերի կողքին գրի՛ր առարկա ցույց տվող բառեր և կազմի՛ր բառակապակցություններ.

տաք, լայն, մեծ, հին:

8. Ամբողջացրո՛ւ նախադասությունները՝ ձախ սյունակից ընտրելով գործողություն ցույց տվող համապատասխան բառը.

Օրը	***թռչում է:***
Ճնճղուկը	***շենանում է:***
Ձյունը.....	***ցրտում է:***
Տունը.....	***գալիս է:***

9. Հեռուստատեսությամբ հայտարարել են, որ քաղաքային շաբաթօրյակ է:

- Ի՞նչ աշխատանքներ կկազմակերպեք ձեր բնակավայրի շրջակայքը կամ բակը կարգի բերելու համար:
- Մշակեք պլան և ներկայացրեք:

10. Պատրաստեք գովազդ, որն աշխարհի տարբեր ծայրերից քո հայ հասակակիցներին կբերի Հայաստան:

Հուշում՝

Օգտվեք Հայաստանի խորհրդանիշ համարվող այս պատկերներից:



ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Հայոց այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը 405 թվականին:

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենն ուներ 36 տառ: Այն սկսվում էր **ա** տառով և ավարտվում էր **ք** -ով:

Ավելի ուշ ավելացան **օ** և **ֆ** տառերը:

Մաշտոցը Հայաստանում բացեց առաջին դպրոցները և ինքն էլ դասավանդեց: Այդ պատճառով նրան անվանում են հայերենի առաջին ուսուցիչ:

Հայոց այբուբենին նվիրված կոթող է կանգնեցված Օշականի ճանապարհին:

Հայոց տառերը քանդակվել են խաչքարերի տեսքով և տեղադրվել Օշական գյուղում, որտեղ էլ ամփոփված է Մեսրոպ Մաշտոցը:

Հայկական երեսունութ տառերի քանդակներ են տեղադրված Արագածոտնի մարզում՝ Արագածի ստորոտում:



Եկե՛ք՝ տանեմ

1. Ո՞վ է ստեղծել հայոց այբուբենը:
2. Երբևէ եղե՞լ ես Օշականում: Պատմի՛ր:

3. Առանձնացրո՛ւ և գրի՛ր հայոց այբուբենի բաղաձայններն ու ձայնավորները:
4. Ի՞նչ գիտես ***ե***, ***ո*** տառերի մասին: Գրի՛ր այդ տառերով սկսվող բառեր:
5. Տրված բառերում ընդգծի՛ր բաղաձայնները.

   սուր, հոտավետ, գունավոր, խելացի, գեղեցիկ:
6. Գրի՛ր վերոնշյալ բառերի հականիշները և դրանցով կազմի՛ր բառակապակցություններ:

7. Վիճում էին ձայնավոր և բաղաձայն հնչյունները. ո՞վ է ավելի կարևոր:



8. Դարձե՛ք դատավոր և հաշտեցրե՛ք նրանց:

✸ Հիմնավորե՛ք, թե որքան կարևոր է նրանցից յուրաքանչյուրը:

9. Հորինիր պատմություն այն մասին, թե ինչպես «***օ***, ***ֆ***»- ն ուշացան հայոց այբուբենին նվիրված տոնից.

- վերնագրիր պատմությունդ,
- պատկերացրու՛, նկարիր և ներկայացրու «Այբուբեն» քաղաքը:

10. Քննարկեք և ներկայացրեք տառերի և թվանշանների կարևորությունը.

- ի՞նչ է տառը,
- ի՞նչ է թվանշանը,
- ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան տառերի և թվանշանների միջև:

11. Ստեղծեք ձեր հեղինակային «Այբբենարան» ալբոմը:

Հուշում՝

Կարող եք յուրաքանչյուր տառին մեկական էջ տրամադրել: Կամ՝

- ստեղծեք տառերի ընտանիքներ,
- դարձրեք տառերին ընկերներ կամ գործընկերներ,
- նկարեք, ծեփեք, քանդակեք տառապատկերները,
- ձևավորեք, նկարազարդեք ալբոմը,
- էջերում տեղադրեք ձեր ստեղծագործությունների լուսանկարները:

ՆՅՈՒՏՈՆԻ ԹԻԿՆՈՑԸ

Աշխարհում ամենուրեք մարդիկ ձգտում էին որքան հնարավոր է շատ բան իմանալ տիեզերքի մասին, թափանցել նրա գաղտնիքների մեջ, գտնել մանկուց իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները՝ աստղերի ծագման մասին:

Մի տարի Լոնդոնում աշխարհի տարբեր կողմերից շատ աստղագետներ էին հավաքվել՝ ներկայացնելու իրենց կատարած աշխատանքները տիեզերքի ուսումնասիրության վերաբերյալ:

Բեմ է բարձրանում միջահասակ, լայնաթիկունք ու լայնաճակատ, խոհուն աչքերով, աշխույժ մի երիտասարդ: Նա զեկուցում է կարդում Արագած լեռան լանջին գտնվող Բյուրականի աստղադիտարանի ու այնտեղ կատարված նոր հայտնագործությունների մասին: Բոլորը հիացած լսում են նրան և զեկուցման ավարտից հետո հոտնկայս ծափահարում:

Այդ մարդն ականավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանն էր, որը պատիվ է ունեցել իր ուսերին կրելու մեծ աստղագետ ֆիզիկոս Նյուտոնի թիկնոցը:

1. Ո՞վ է Վիկտոր Համբարձումյանը:
2. Ի՞նչ իմացար նրա մասին:
3. Ի՞նչ թիկնոցի մասին է խոսվում տեքստում: Այդ մասին հարցեր պատրաստիր մեծահասակների համար:
4. Ինչ՞ն կարելի է օրվա տարբեր ժամերին տեսնել երկնակամարում:

5. Քննարկեք «տիեզերքի գաղտնիքներ» արտահայտությունը.

- ինչ գիտեք տիեզերքի մասին,
- ինչ գիտեք Երկիր մոլորակի մասին,
- նախապատրաստեք տիեզերքի մասին հարցեր ձեր համադասարանցիների համար:



6. Կարդա՛ մոլորակների անվանումները, ապա դրանց հայկական անունները գրի՛ր այբբենական կարգով:

Արեգակի շուրջը, բացի Երկիր մոլորակից, պտտվում են աչքով տեսանելի հինգ մոլորակ՝ **Փայլածու** (Մերկուրի), **Լուսաբեր** (Վեներա), **Հրատ** (Մարս), **Երևակ** (Սատուրն), **Լուսնթագ** (Յուպիտեր), և աչքով անտեսանելի երեք մոլորակ՝ Ուրան, Նեպտուն և Պլուտոն:

7. Լսե՞լ ես՝ «Տե՛ս, աստղ է ընկնում, ցանկություն պահի՛ր» արտահայտությունը:

✸ Գրի՛ր քեզ համար կարևոր մի ցանկություն:

8. Շարունակի՛ր ըստ օրինակի:

ա)

զանգ	*զանգել*
լաց	
երգ	
ծիծաղ	
գիր	

բ) Աստղերը փայլում են:

առարկա	*գործողություն*
աստղ	*փայլել*

գ) Պայծառ արևը ջերմացնում է:

առարկա	*գործողություն*	*հատկանիշ*
արև	*ջերմացնել*	*պայծառ*

9. Պատկերացրեք, որ հայտնագործել ենք մի նոր մոլորակ.

- ստեղծեք ձեր պատկերացրած մոլորակի մանրակերտը,
- առաջարկեք, քննարկեք, որոշեք մոլորակի անունը,
- նկարագրեք այդ նոր մոլորակի արտասովոր բնությունը,
- ովքեր են բնակիչները,
- մշակեք ու գրեք մոլորակի վրա ապրելու մի քանի արտասովոր կանոններ,
- աշխատանքը ներկայացրեք պատկերազարդ պաստառի միջոցով:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ի՞նչ գիտեիր և ի՞նչ նոր տեղեկություններ իմացար Հայաստանի մասին:

2. Պատկերացրո՛ւ հանդիպել ես օտարերկրացու. նշի՛ր երեք կարևոր բան, որ կպատմես հայրենիքիդ մասին:

3. Կազմակերպե՛ք «Ես սիրում եմ իմ հայրենիքը» խորագրով կավճանկարչություն և ցուցադրություն:

4. Պատրաստե՛ք և ներկայացրե՛ք գովազդային ցուցապաստառ, գրքույկ կամ տեսահոլովակ ձեր բնակավայրի՝ քաղաքի, գյուղի, թաղամասի և մեկ այլ սիրելի վայրի վերաբերյալ:

Հիշի՛ր

Բառերը կարող են լինել իմաստով մոտ.

գույնզգույն - երփներանգ, կարդալ - ընթերցել

Բառերը կարող են լինել իմաստով հակառակ.

բարձր - ցածր, թեթև - ծանր:

ԲԱՌԱՑԱՆԿ

ականավոր	*աչքի ընկնող, նշանավոր, հայտնի*
արգելոց	*արգելելու, փակելու և պահելու տեղ*
բարձրաբերձ գաղտնիք	
դարավանդ	*բարձր տեղ*
Երևան Զվարթնոց	
լքել	*թողնել-հեռանալ*
խաչքար	*քար, որի վրա խաչ է քանդակված*
կոթող	*հուշարձան*
հայրենի	*հայրենիքին պատկանող, հայրական*
հոտնկայս	*ոտքի կանգնած*
ձյունապատ	*ձյան ծածկույթով պատված*
ոռոգել	
ջրվեժ	*բարձունքից սրընթաց կերպով ցած թափվող ջրի հոսանք*
ստորոտ	*բարձունքի ստորին՝ ցածի մասի տարածությունը*
Սևան տիեզերք	
ցեղ	*տոհմ, գերդաստան, ընտանիք*
ցուրտը տանել	*ցրտահարվել*
քաղցրանալ	
քանդակ	*քանդակագործական պատկեր*
օրեցօր	

Մի տանիքի տակ

Մուտքի խոսք

ԵՍ ԻՄ ԲԱԺԻՆ ԵՐԿԻՆՔՆ ԵՄ ՊԱՀՈՒՄ

(միջնադարյան զրույց)

Արտույտը վախենում է, որ երկինքը փուլ կգա: Նա պառկում է մեջքի վրա, ոտքերը վեր է տնկում ու աշխատում դեմ տալ երկնքին: Տեսնողները հարցնում են.

- Էդ ի՞նչ ես անում:
- Երկինքն եմ պահում:

Հարցնողները ծիծաղում են նրա վրա.

- Ա՛յ արտույտ, դու ո՞նց կարող ես քո ծղոտե տոտիկներով երկինքը պահել:
- Ես իմ բաժին երկինքն եմ պահում:

1. Ի՞նչ ձևով էր արտույտը փորձում երկինքը պահել:
2. Քո կարծիքով արտույտը միայնակ կարո՞ղ էր երկինքը փրկել փուլ գալուց:
3. Ի՞նչ ես կարծում իրաո՞ն է արտույտի այն միտքը, թե երկինքը կարող է փուլ գալ:
4. Ի՞նչ այլ վերնագիր կառաջարկես այս պատմության համար:

5. Գրի՛ր տրված նկար-առարկաներին բնորոշ հատկանիշներ և կազմի՛ր բառակապակցություններ:

արտույտ

.....
.....
.....

երկինք

.....
.....
.....

6. Արտագրի՛ր, ընդգծի՛ր՝ նշված բառերի այն բաղադրիչը, որն ընդհանուր է բոլորի համար.

ծիծաղ, ծիծաղել, ծիծաղկոտ, ծիծաղաշարժ:

«Ծիծաղ»-ը բառի հիմնական իմաստն է արտահայտում և այն բառի արմատն է:

7. Առանձին շարքերով արտագրի՛ր նույն արմատն ունեցող բառերը.

ջրալի, արևոտ, շողշողուն, արևաշող, ջրիկ,
արևիկ, անջուր, Շողիկ:

8. Կարդացե՛ք Աթաբեկ Խնկոյանի «Աքաղաղն ու կտուրը» բանաստեղծությունը:

Մի աքաղաղ
Կարմրապեծիկ,
Իր ոտները՝
Երկար ու ձիգ,
Կտրին տալով՝
Վեր-վեր ձգվեց



Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց.
Էս ո՞նց է, որ
Ես զոռ տալիս,
Էս կտուրը
Փուլ չի գալիս:

9. Համեմատեք այս ստեղծագործությունը արտույտի մասին պատմության հետ. ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր:

10. Բնութագրեք արտույտին և աքաղաղին:

11. Ներկայացրեք ձեր կարծիքը և հիմնավորեք:

12. Բեմադրեք ստեղծագործություններից մեկը՝ ձեր նախընտրությամբ:

13. Կարող եք նոր հերոսներ ավելացնել:

Հուշում

- Պատկերացրեք, որ արտույտին են մոտենում տարբեր թռչուններ ու կենդանիներ և հարցեր են տալիս:
- Աքլորիկի հարցին էլ անցորդները տարբեր պատասխաններ են տալիս:
- Բոլորը որոշում են միասին պահպանել բնությունը:

14. Եզրագծեք ձեր ձեռքերը թղթի վրա, ապա կտրեք ստացված պատկերները.

- աջ ձեռքի ափի մեջ գրեք, թե ինչ կարող եք անել աշխարհն ավելի լավը դարձնելու համար,
- ձախ ձեռքի ափի մեջ գրեք այն արարքները, որոնք վնասում են բնությունը:

15. Համեմատեք նախադասությունները և մեկնաբանեք.

«Ես իմ բաժին երկինքն եմ պահում»:

«Մենք բոլորս Երկիր մոլորակի բնակիչներ ենք»:

16. Գրեք հայտարարություն և հրավիրեք աշխարհի երեխաներին «Պահպանենք մեր մոլորակը» թեմայով քննարկման:

17. Ներկայացրեք, թե ինչ հարցեր են քննարկվելու հանդիպման ժամանակ:

Հուշում

- օդի և միջավայրի աղտոտվածություն,
- կանաչապատ տարածքների վերացում,
- վնասակար արտանետումներ և այլն:

Երբ երկու բառ պատահականորեն հանդիպում են՝

18. Հետևելով քայլաշարին՝ ստեղծեք մի նոր պատմություն.

- առանձին քարտի վրա գրեք մեկական բառ և շրջեք,
- ընտրեք պատահական երկու քարտ,
- ձեր քարտերի վրա գրված բառերով բառակապակցություններ կազմեք,
- կարող են ստացվել շատ տարբեր և արտասովոր բառակապակցություններ,
- ընտրեք ձեզ համար ամենահետաքրքիր ու յուրօրինակ բառազույգը,
- դարձրեք բառերի այդ զույգը ձեր պատմության վերնագիրը,
- հորինեք պատմություն:

Նմուշօրինակ՝

համակարգիչ, արջ - *«Արջի համակարգիչը», «Արջ կուլ տված համակարգիչը», «Համակարգիչ արջը» և այլն:*

Եզոպոսի առակները

ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ

Հովհաննես Թումանյան

Էնտեղ ուր հովը խաղում է ազատ,
Ուր ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պիտի հեռանամ,
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:
Թո՛ղ գնամ, շրջեմ աշխարհից աշխարհ
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու:
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խրճիթից,
Էս հին խրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
Ու գնաց, երկար թափառեց տղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,

Բայց միշտ ամեն տեղ պակաս էր մի բան…
Ու հառաչելով հետ վերադարձավ
Էս գորշ խրճիթը,
Էս հին խրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
«Գտա՛ր, զավա՛կս»,- հարցրեց մայրը
Ուրախ նայելով իր տղի վրա:
«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

1. Ինչո՞ւ տղան որոշեց ճամփորդել աշխարհով մեկ:
2. Իրականացա՞վ տղայի երազանքը:
3. Ի՞նչը ստիպեց տղային վերադառնալ:
4. Մայրիկը վստահ էր, որ տղան վերադառնալու է. սա փա՞ստ է, թե՞ կարծիք:
5. Լինում է այնպես, որ մարդիկ ապրում են իրենց ծննդավայրից հեռու: Սա փաստ է: Գիտե՞ս այդպիսի դեպքեր:
6. «Քո տունը» բանաստեղծությունը համեմատի՛ր «Ամենից լավ տունը» բանաստեղծության հետ. ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր:

7. Կազմեք և գրեք այս տներից յուրաքանչյուրին բնորոշ բառակապակցություններ:

8. Քննարկեք և ներկայացրեք, թե որ տան դուռն առաջինը կթակեք: Ինչո՞ւ:

9. Վանկատիր բառերը.

երազ, արտույտ, կաքավ,...

լուսամուտ, արագիլ, ճոճանակ,...

Շարունակիր ծափերի նույն քանակով արտասանվող բառերի այս շարքը:

10. Դուրս գրիր միևնույն արմատն ունեցող բառերն առանձին սյունակներով:

11. Արև բառին ավելացրել ենք ***-ոտ***,-***ային*** մասնիկները և ստացել ենք ***արևոտ***, ***արևային*** բառերը:

12. Ավելացրու ***-ային***,-***եղ***,-***ավոր***,-***ոտ*** մասնիկները տրված բառերին և ստացիր նոր բառեր.



արև	թագ	լույս

քար- ***գույն -***

տուն – ***թագ-***

13. Համեմատիր ***թագ*** և ***թագավոր*** բառերը: Բացատրիր՝ ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր:

Հիշիր

Այդ մասնիկները, որոնք ավելացրիք նոր բառեր կազմելու համար, ածանցներ են:

14. Քննարկեք և ներկայացրեք ձեր ճամփորդական ուսապարկի պարունակությունը.

- անվանեք նկարում պատկերված իրերը,
- ավելացրեք այն իրերի ցանկը, որոնք ձեր կարծիքով պակասում են,
- հիմնավորեք յուրաքանչյուր առարկայի կարևորությունն ու անհրաժեշտությունը:

ԻՆՉՔԱ՞Ն Է ԿՇՌՈՒՄ ՄԻ ՓԱԹԻԼ ՁՅՈՒՆԸ

Դեպլև Բլոկ

Ձմեռ է: Ամենուրեք ձյուն է գալիս:

Մի աղավնի, ծառի ճյուղին նստած, հանգիստ և տխուր նայում էր ձյան փաթիլների շարժմանը:

«Երանի մի զրուցակից լիներ. թեկուզ մի փոքրիկ ճնճղուկ»,- մտածում էր աղավնին և նայում շուրջը:

Հենց այդ պահին նրան է մոտենում մի երաշտահավ:

- Բարի օր, աղավնի՛:

- Ողջո՛ւյն,- պատասխանում է աղավնին,- ինչ լավ է, որ եկար, ինչպե՞ս ես, ի՞նչ նորություն կա անտառում:

- Ամբողջ աշխարհը ծածկված է ձյունով,- ասում է երաշտահավը,- այսպիսի եղանակին ինչ տարօրինակ մտքեր ու հարցեր ասես, որ չեն անցնում գլխովս: Աղավնի՛, ի՞նչ ես կարծում, ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը:

Զարմացած աղավնին նայում է երկնքին և հետևում մեկը մյուսի հետևից հանդարտ իջնող ձյան փաթիլներին:

- Մի փաթիլ ձյունն այնքան թեթև է, որ ընդհանրապես ոչինչ չի կշռում.- պատասխանում է աղավնին,- ոչ ավելին, քան ոչինչը:

- Ես էլ էի այդպես կարծում,- ասում է երաշտահավը,- բայց դա այդպես չէ: Լսի՛ր, քեզ մի հետաքրքիր դեպք պատմեմ, որը վերջերս անձամբ եմ տեսել: Ես մի սոճու ճյուղին նստած էի, երբ սկսեց ձյուն գալ: Քամի չկար, ձյունը գալիս էր կամաց և դանդաղ, ինչպես հիմա. անձայն ու թեթև: Քանի որ ուրիշ զբաղմունք չունեի, սկսեցի հաշվել դիմացի ճյուղին նստող փաթիլները: Դու պիտի իմանաս՝ ես շատ արագաշարժ

եմ ոչ միայն թռչելիս և ծվծվալիս, այլև՝ հաշվելիս: Ճյուղին նստած փաթիլների թիվն անցնում էր միլիոնը: Երբ ճյուղին ընկավ վերջին փաթիլը, ոչ ավելի ծանր, քան ոչ մի բանը, ճյուղը կոտրվեց, քանի որ ձյան բեռը չափազանց ծանրացել էր ճյուղի համար:

Երաշտահավն ավարտում է իր պատմությունը և թռչում գնում:

Աղավնին ընկնում է մտածմունքի մեջ. «Հետաքրքիր դեպք պատմեց երաշտահավը»:

Եվ քանի որ աղավնին խելացի թռչուն էր, թռչուն, որին մարդիկ անվանել են խաղաղության խորհրդանիշ, իսկույն ըմբռնեց, թե ինչ է նշանակում այս պատմությունը:

«Երևի միայն մեկ մարդու ձայն է պակասում աշխարհի խաղաղության համար,- մտածում է աղավնին,- յուրաքանչյուր մարդու ձայնը կարևոր է, որ վերջապես խաղաղություն հաստատվի»:

Աղավնին ուրախանում է այս մտքից և նորից, բայց արդեն հանգիստ և ուրախ նայում է հանդարտորեն իջնող ձյան փաթիլներին:

1. Նկարագրի՛ր ձմեռային անտառը:
2. Ինչո՞ւ էր աղավնին տխուր:
3. Ինչո՞վ էր արտասովոր երաշտահավի պատմած դեպքը:
4. Ըստ քեզ՝ հնարավո՞ր է արդյոք կշռել ձյան մեկ փաթիլը: Ինչպե՞ս:

5. Ամբողջացրո՛ւ տրված անավարտ նախադասությունները:

Տարին ունի ..... եղանակ:

Ձյան փաթիլները ....:

Աղավնին խաղաղության ..... է:

Ճյուղը կոտրվեց ձյան .....:

6. Կազմե՛ք երկխոսություններ.

- որևէ բան հաղորդելու,
- ուրախությունը փոխանցելու,
- խորհուրդ տալու կամ ստանալու վերաբերյալ:

7. Աղյուսակում խմբավորի՛ր տրված բառերը՝ ըստ կազմության.

պարզ	***բարդ***	***ածանցավոր***

խորհրդանիշ, պատմություն, զրուցակից, արագաշարժ, երաշտահավ, անձայն, ճյուղ, ձայն, տարօրինակ, խաղաղություն, թռչուն, խելացի, հանդարտորեն, ձմեռ:

Անտառային հեքիաթներ

8. Կազմի՛ր բառակապակցություններ՝ ***ձյուն, թռչուն, բեռ, ճյուղ, պատմություն*** բառերով:

✸ Գրի՛ր յուրաքանչյուր բառին տրվող հարցը.

օրինակ՝ ***ճերմակ (ինչպիսի՞), ձյուն (ի՞նչ):***

9. Գրի՛ր տրված բառերին իմաստով հակառակ բառերը.

հանգիստ, փխուր, փոքրիկ, թեթև, խելացի, անձայն, թեթև:

10. Պատկերի՛ր խաղաղության խորհրդանիշ: Բացատրի՛ր:

11. Ուրիշ ի՞նչ խորհրդանիշներ գիտես: Ներկայացրո՛ւ:

12. Պատկերացրե՛ք՝ աղավնին ու երաշտահավը հանդիպել են գարնանը:

✸ Ներկայացրե՛ք երաշտահավի և աղավնու զրույցը գարնանային բնության շուրջ:

13. Կազմակերպե՛ք նկարների ցուցադրություն «Խաղաղություն» թեմայով.

✸ ցուցադրության խորագիր ընտրեք.

օրինակ՝ ***«Խաղաղության գույները»***

✸ յուրաքանչյուր նկարի համար պատրաստե՛ք համառոտ մեկնաբանություն:

✸ քննարկե՛ք և ընտրե՛ք համապատասխան երաժշտություն, որն ամբողջ ընթացքում կուղեկցի ցուցադրությանը:

Ո՞ՐՆ Է ԼԱՎ

(անգլիական հեքիաթ)

Մի անգամ փիղը հանդիպում է կապիկին և ասում է.

- Տե՛ս, ես այնքան ուժեղ եմ, որ կարող եմ այս ծառը երկու մասի բաժանել: Իսկ դու կարո՞ղ ես:

Կապիկը ծիծաղում է և պատասխանում.

- Ճիշտ է, դու ուժեղ ես, բայց նաև դանդաղաշարժ ես: Դու չես կարող արագ վազել և մագլցել ծառը: Ավելի լավ է լինել արագաշարժ, քան ուժեղ:

- Օ՜հ, ո՛չ,- բացականչում է փիղը,- ավելի լավ է լինել ուժեղ, քան արագաշարժ:

Նրանք երկար վիճում են: Վերջապես որոշում են դիմել մի ծեր խելացի ագռավի: Ագռավը նրանց ուշադիր լսելուց հետո ասում է.

- Դուք տեսնո՞ւմ եք գետի մյուս ափին գտնվող այն մեծ պտղատու ծառը: Գնացեք և այդ ծառից մի քիչ մի՛րգ բերեք ինձ: Այն ժամանակ ես ձեզ կասեմ, թե որն է ավելի լավ՝ լինել ուժեղ, թե՞ արագաշարժ:

Փիղն ու կապիկը ճանապարհ են ընկնում, բայց հենց որ հասնում են գետափ, կապիկը տեսնում է, որ գետը շատ լայն է:



Նա տխրում է և ասում.

- Օ՜հ, ես չեմ կարող լողալով անցնել դիմացի ափը:

- Թո՛ւյլ տուր քեզ օգնել,- ասում է փիղը,- բարձրացի՛ր մեջքիս, ես քեզ կտանեմ:

Կապիկը բարձրանում է փղի մեջքին, և երկուսով անցնում են գետը, մոտենում պտղատու ծառին: Սակայն ծառն այնքան բարձր էր, որ փիղը չէր կարող հասնել մրգերին: Նա զայրացած փորձում էր ջարդել ծառը, բայց իզուր, ծառը շատ հաստաբուն էր:

- Համբերի՛ր,- բացականչում է կապիկը,- ես կբարձրանամ ծառը և մրգերը կքաղեմ:

Նա արագորեն մագլցում է ծառը և քաղում է միրգը: Հետո նրանք նույն ձևով անցնում են գետը և միրգը բերում տալիս են ագռավին:



1. Ինչո՞ւ էին վիճում կապիկն ու փիղը:
2. Ի՞նչ հանձնարարեց ագռավը:
3. Ինչպե՞ս լուծվեց կապիկի ու փղի վեճը:
4. Քո կարծիքով արագաշա՞րժ, թե՞ ուժեղ լինելն է լավ:

5. Համեմատիր ***արագ*** և ***արագաշարժ*** բառերը.

✸ կազմիր նախադասություններ այդ բառերով:

6. Գրիր հետևյալ բառերի հականիշները.

ուժեղ, դանդաղաշարժ, արագ, ծեր, խելացի, ուշադիր, մեծ:

7. Քննարկեք և ներկայացրեք՝ արդյոք միշտ են հարցերը լուծվում վեճի միջոցով:

8. Դիտեք նկարները և օգնեք երեխաներին ճիշտ որոշում կայացնել:

9. Մեկնաբանիր նկարները և ցույց տուր, թե ինչ կապ ունեն դրանք «Ո՞րն է լավ» հեքիաթի բովանդակության հետ:

①

②

③

④

⑤



⑥

10. Անվանիր նկարները և ավելացնելով ***-ուկ*** և ***-իկ*** մասնիկները՝ ստացիր նոր բառեր և գրիր:



11. Քննարկեք, թե ինչ է պետք հաջողության հասնելու համար:

12. Գրի՛ առեք և ներկայացրեք ձեր գաղափարները այսպիսի պաստառի միջոցով:

ՄԵԿ ԵՎ ՅՈԹ

Ջանի Ռոդարի

Ես մի տղա գիտեի, որ յոթ տղա էր: Ինչպե՞ս կարող է պատահել: Հիմա կպատմեմ...

Ապրում էր Հռոմում, անունը Պաոլո էր, նրա հայրը տրամվայի վարորդ էր:

Նա նաև ապրում էր Փարիզում, անունը Ժան էր, հայրն էլ աշխատում էր ավտոմեքենաների գործարանում: Նա նաև ապրում էր Բեռլինում, ուր նրան Կուրտ էին կոչում, հայրը թավջութակահար պրոֆեսոր էր:

Նա նաև ապրում էր Մոսկվայում, անունը Յուրի էր, ինչպես Գագարինինը, և նրա հայրը քարտաշ էր ու մաթեմատիկա էր սովորում:

Նա նաև ապրում էր Նյու Յորքում, անունը Ջոն էր, և նրա հայրը բենզին էր վաճառում: Քանիսի՞ն թվեցի: Հինգին: Մնաց երկուսը: Մեկի անունը Չու էր, ապրում էր Շանհայում, և նրա հայրը ձկնորս էր, վերջինի անունը Պաբլո էր, ապրում էր Բուենոս Այրեսում, նրա հայրն էլ ներկարար էր: Պաոլոն, Ժանը, Կուրտը, Յուրին, Ջոնը, Չուն և Պաբլոն յոթն էին, բայց միևնույն է՝ նույն տղան էին, որը յոթ տարեկան էր, արդեն գրել, կարդալ գիտեր



և կարողանում էր հեծանիվ քշել՝ առանց ղեկը բռնելու:

Պաոլոն սևահեր էր, Ժանը՝ շիկահեր, իսկ Կուրտը շագանակագույն մազեր ուներ, բայց նրանք նույն երեխան էին: Յուրին ճերմակ մաշկ ուներ, Չուի մաշկը դեղին էր, բայց նրանք նույն տղան էին: Պաբլոն իսպաներեն էր կինոնկարները դիտում, Ջոնը՝ անգլերեն, բայց նրանք նույն տղաներն էին և նույն լեզվով էին ծիծաղում:

Այժմ յոթն էլ մեծացել են և այլևս չեն կարող պատերազմել, որովհետև յոթն էլ նույն մարդն են:

1. Ովքե՞ր են հեղինակի նկարագրած տղաները: Քանի՞սն են նրանք:
2. Ի՞նչ հետաքրքիր միտք է թաքցրել Ջանի Ռոդարին իր այս հեքիաթում:
3. Ի՞նչ մասնագիտությունների մասին է խոսվում տեքստում:
4. Ի՞նչ ընդհանուր ցանկություն ունեին տարբեր երկրներում ապրող երեխաները:
5. Կարդա՛ հեքիաթի ամենակարևոր միտքն արտահայտող նախադասությունները և մեկնաբանի՛ր:

6. Տառերը դասավորեք ճիշտ հերթականությամբ և ստացեք բոլոր երեխաների համար ցանկալի բառ.

- տառերը կարող են կրկնվել,
- կազմեք ստացած բառից նոր բառեր:

7. Տեքստից դուրս գրիր և ներկայացրու հերոսների և նրանց բնակավայրերի անունները:

8. Ինչ ազգությունների էին պատկանում հեղինակի նկարագրած տղաները:

9. Ինչ տեղեկություններ կան հերոսների արտաքին տեսքի մասին:

10. Բառերը բաժանիր մասերի.



11. Ավելացրու հեքիաթի հերոսների շարքում նաև քեզ:

12. Շարունակիր՝ ավելացնելով, թե էլ ինչ կարող են անել յոթ տարեկան երեխաները:

Պաոլոն, Ժանը, Կուրտը, Յուրին, Ջոնը, Չուն և Պաբլոն յոթն էին, բայց միևնույն է՝ նույն տղան էին, որը յոթ տարեկան էր, արդեն գրել, կարդալ գիտեր և կարողանում էր հեծանիվ քշել՝ առանց ղեկը բռնելու...

13. Ուսումնասիրեք և ներկայացրեք խաղեր, որ սիրում են խաղալ աշխարհի բոլոր երեխաները՝ անկախ նրանց լեզուների տարբերությունից:

14. Պատրաստեք տարբեր ազգություններ հիշեցնող դիմակների հավաքածու և կազմակերպեք ցուցադրություն:

Ջանի Ռոդարի
Ստեղծագործական երևակայության քերականություն

ՏԱՐԲԵՐ, ԲԱՅՑ ՆՈՒՅՆԸ

Ֆերիդուն Օրա

Գարնանային մի երեկո հովիվը ծաղկած սարից հոտը տուն էր քշում:

Հոտն ամբողջ օրը արածել էր ու հոգնել:

Հովտում՝ ձիթապտղի ծառերի տակ հանգստանալիս, այծերից մեկը ձագուկ ունեցավ, սև ականջներով մի սիրունիկ ուլիկ:

Այս ուլիկը հոտի մյուս ձագուկներից փոքր-ինչ տարբերվում էր:

Հովիվը տեսավ, որ ուլիկի առջևի ոտքերը թույլ են, կանգնել, քայլել չի կարողանում, գիրկն առավ նրան:

Երեկոյան տունդարձի ճանապարհին փոքրիկ ձագուկն անդադար մկկում էր և փարախ չհասած՝ հովվի գրկում քուն մտավ:

Այդ օրվանից հովիվն ուլիկին խուրջինի մեջ էր պահում: Մյուս ուլիկներն արագ մեծանում էին, արոտավայրում վազվզում, խաղում և չէին նկատում, որ մեր սևականջը նրանց չի միանում:

Երբեմն հովիվը շվի էր նվագում: Այդ ձայնից ուլիկը տխրում

էր, երազում, որ մի օր ինքն էլ ընկերների պես սարերում ու բլուրներում վազել, թռչկոտել ու խաղալ կարողանա:

Մի օր, երբ հոտն արածում էր, հովիվը գետնին ինչ-որ բան էր գծում ու երկար մտածում: Հետո կաղնու ճյուղեր կտրեց, ոլորեց, ճկեց, հյուսեց ու ուլիկի համար մի յուրահատուկ հեծանիվ սարքեց:

Վաղ առավոտյան, երբ հոտը դեռ փարախում քնած էր, հովիվն ուլիկին գրկեց ու դուրս եկավ բակ: Սևականջին հեծանիվ նստեցրեց ու զգուշորեն հրեց: Ուլիկը շփոթվել էր: Չգիտեր՝ ինչ աներ:

Ծնվելու օրից առաջին անգամ էր ուլիկն իր ոտքերը զգում: Զգում էր մարմնի ծանրությունը, բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Հովվի օգնությամբ, սակայն դժվարությամբ ուլիկը մի քայլ արեց: Հետո էլի մի քայլ, էլի, էլի... Ու մեկ էլ սկսեց քայլել:

Ուլիկն ուրախ մկկաց: Այդ օրվանից իր արտասովոր հենակով հոտի հետ սար էր բարձրանում: Ընկերների հետ խաղում էր, արածում հովտում:

Երբ նա մեծացավ, հովիվը նրա համար ավելի մեծ հեծանիվ սարքեց: Ու մի օր էլ մեր սևականջը մի այծ տեսավ, որի պոզերը խճճվել էին բաղեղների մեջ, օգնեց, որ ազատվի:

Այդ օրվանից երկու այծերն ընկերացան: Միշտ միասին էին շրջում, միասին արածում:

Երբ գարունը եկավ, մեր ուլիկ-այծիկը երկու փոքրիկ ձագուկ ունեցավ. մեկը սև, մյուսը՝ սպիտակ:



Իրենց մայրիկին նման, ու հա՛մ էլ նրանից տարբեր, ուրախ ու չարաճճի երկու ուլիկները ողջ օրը ցատկոտում էին արոտներում:



1. Ե՞րբ է տեղի ունեցել այս պատմությունը:
2. Ինչո՞վ էր տարբերվում սևականջ ուլիկն իր ընկերներից:
3. Ո՞րն էր նրա երազանքը:
4. Ի՞նչ զգացիր, երբ կարդացիր «Ծնվելու օրից առաջին անգամ էր ոտքերը զգում...» նախադասությունը:
5. Քո կարծիքով սևականջն ի՞նչ կպատմի ձագուկներին իր կյանքի մասին:

6. Եթե բնութագրեիք հովվի արարքը, ապա տրված բառերից որո՞նք կընտրեիք:

✸ Արտահայտե՛ք ձեր մտքերը՝ օգտագործելով այս բառերը.

անսովոր, բնական, սովորական, ընդունելի, անընդունելի, բարեգութ, դատապարտելի, ծիծաղելի:

7. Մեկնաբանեք պատմության վերնագիրը՝ «Տարբեր, բայց նույնը»:

- Ինչո՞վ կարող են նման կամ տարբեր լինել մարդիկ:
- Լա՞վ է, թե՞ վատ, երբ կան տարբերություններ:
- Բացահայտեք մի քանի նմանություն և տարբերություն ձեր երկուսի միջև:

8. Վանկատի՛ր բառերը.

գարնանային, փոքրիկ, հովիվ, ճագուկ, հեծանիվ, սիրունիկ, սևուկ:

9. Բառերի վերոնշյալ շարքից դո՛ւրս գրիր ածանցավոր բառերը և ընդգծիր դրանց արմատն ու ածանցը:

10. Օգտվելով նկարելուկներից՝ կազմիր բառեր և գրի՛ր:

+ իկ

+ արար

+ ուհի

+ ակ


+ ակ

+ ուկ

11. Ավարտի՛ր այս նախադասությունը մի քանի տարբերակով.

Մարդ կարող է հաղթահարել դժվարությունները, եթե...:

12. Օգտվիր ներկայացված սննդամթերքից և կազմիր մեկ օրվա ճաշացանկ:

Նախաճաշ	Ճաշ	Հեկճաշիկ	Ընթրիք

13. Պատմիր նկարները և վերնագրիր:

① ② ③

④ ⑤ ⑥

14. Պատմեք նկարները՝ գնահատելով երեխաների արարքները.

- խմբի անդամներից յուրաքանչյուրին խնդրեք ներկայացնել այլ դեպքեր ևս,
- կարդացեք գրառումները և քննարկեք:







ԱՄՓՈՓՈՒՄ

Հանպատրաստից խոսք կառուցի՛ր՝

Իրավիճակ 1.

Անձրևոտ օր է: Կերպարվեստի դասին ուսուցիչը հարցնում է, թե բոլոր գույներից որն է ամենակարևորը: Յուրաքանչյուր աշակերտ իր ընտրած գույնով ներկում է պաստառի որևէ հատվածը՝ հիմնավորելով այդ գույնի կապը որևէ կարևոր երևույթի հետ: Աշխույժ բանավեճի արդյունքում ստեղծվում է մի ուրախ պատմություն...

Իրավիճակ 2.

Երեխաները ուսուցչի հանձնարարությունն են կատարում: Ոմանք նկատում են, որ պատուհանի գոգին կատու է հայտնվել, որը փորձում է ճնճղուկ որսալ:

Գրանցե՛ք ձեր բոլորի արագ արձագանքները:

Իրավիճակ 3.

Դասի սկսվելուն երեք րոպե է մնացել, բայց միջանցքից ներս վազող աշակերտներից մեկը պատահաբար շրջել է աղբարկղը և ամբողջովին աղտոտել է դասասենյակը:

Արձագանքե՛ք արագ գործելու համար:

Հիշի՛ր

Պարզ են այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ արմատից.

փուն, քար, ծառ, գույն

Բարդ են այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից.

թոնրապուն, քարկոշ, ծառապունկ, ծիրանագույն:

Ածանցավոր են այն բառերը, որոնք կազմված են արմատից և մեկ կամ ավելի ածանցներից.

փնային, քարե, գունավոր, անվախ:

ԲԱՌԱՑԱՆԿ

ամբողջ	
անվերջ	
առաջին	
բաղեղ	*մագլցող բույս*
գորշ	*մուգ, մոայլ*
ըմբռնել	*հասկանալ, մտքով յուրացնել*
թավջութակահար	*լարային երաժշտական գործիքին տիրապետող մարդ*
խորհրդանիշ	*պատկեր, որը պայմանականորեն արտահայտում է որևէ գաղափար*
խրճիթ	*հողածածկ կտուրով գյուղական հասարակ փոքրիկ տուն*
ծղոտ	*բույսերի՝ հատկապես հացահատիկային բույսերի ցողուն*
կարևոր	
համբերել	
հաստաբուն	*հաստ բուն ունեցող*
հոգնել	
ճկել	*թեքել, ծռել*
ճյուղ	
մագլցել	*կառչելով բարձրանալ*
մտածմունք	
մեջք	
միրգ	
շագանակագույն	
ոտք	
պառկել	
վարորդ	
վերադարձավ	
փարախ	*ոչխարների հանգստանալու տեղ, գոմ*
քարտաշ	*քար տաշող, հղկող մարդ*

Մուտքի
խոսք

Թե ինչու...

ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՍ

Զանի Ռոդարի

Եթե ուզում ես
Ունենալ սեղան,
Անպայման պիտի
Ունենաս դու փայտ:

Եթե ուզում ես
Ունենալ դու փայտ,
Անպայման պիտի
Ունենաս դու ծառ:

Եթե ուզում ես
Ունենալ դու ծառ,
Անպայման պիտի
Ունենաս դու սերմ:

Եթե ուզում ես
Ունենալ դու սերմ,
Անպայման պիտի
Ունենաս պտուղ:

Եթե ուզում ես
Ունենալ պտուղ,
Անպայման պիտի
Ունենաս ծաղիկ:



սերմ

անպայման

1. Ըստ բանաստեղծության՝ բացատրիր, թե ինչից ինչ կարող է առաջացել:
2. Հենց այս պահին ուշադիր զննիր շրջապատդ և մատնանշիր իրեր, որոնց պատրաստման համար փայտ են օգտագործել:
3. Ինչո՞վ է ծառը կարևոր բոլորիս համար:
4. Ի՞նչ կլինի, եթե Երկիր մոլորակը բուսականությունից զուրկ լինի:
5. Կարդա՛ բառախմբերը: Ի՞նչ նկատեցիր՝ բացատրիր:

Անահիտ *է* *խոհարար* *մայրիկ*

Անահիտի մայրիկը խոհարար է:

6. Դասավորիր բառերն այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվեն նախադասություններ:

Գրիր կազմածդ **նախադասությունները**:

Հողում *պայծառ* *է* *արևը*

դասարանով *գնում* *այսօր* *ենք* *էքսկուրսիա*

կարդում *է* *գիրք* *շատ* *Անի*

7. Դիտեք և քննարկեք նկարները:
8. Համեմատեք նկարների բովանդակությունը և ներկայացրեք ձեր կարծիքը «Ինչն է լավ, ինչն է վատ» խորագրի տակ:

9. Դիտիր նկարը: Վերնագրիր այն:
10. Հորինիր մի փոքրիկ պատմություն նկարի շուրջ:
11. Հաշվիր՝ քանի նախադասություն կազմեցիր:

Հեքիաթներ անտառի մասին

12. Համացանցից քաղած տեղեկատվության օգնությամբ պատմեք, թե ինչեր են պատրաստում ծառից ստացած փայտանյութից:

13. Ինչպե՞ս վերականգնել բնությանը հասցված վնասը:

14. Կազմի՛ր տարբեր նախադասություններ այս նույն տարբերակներով՝

Եթե ես ունենամ ..., ապա կունենամ՝ ....:

Հուշում՝

Եթե ես ունենամ գիտելիք, ապա կունենամ աշխատանք:

Մենք բնության մի մասնիկն ենք

15. Մշակեք և գրեք չորս շատ կարևոր կանոն՝ բնության պահպանության համար:

- Յուրաքանչյուր կանոնի հեղինակը թող դառնա ձեր խմբի անդամներից մեկը:
- Բոլոր կանոնները միասին քննարկեք և յուրաքանչյուրի համար խորհրդանիշ հորինեք: Ներկայացրեք առանձին պաստառներով:
- Պատրաստեք հաղորդում «Առողջ բնություն, առողջ մարդ» թեմայով:

ՍԻՐԻՐ ԿԱՆԱՉԸ

Խաչիկ Դաշտենց



Սիրի՛ր այգի, ծիլ ու անտառ,
Օգուտ է մեզ ամեն մի ծառ,
Ծառն է տալիս գեղեցկություն
Եվ զարդարում թե՛ բակ, թե՛ տուն:
Հով է անում նա բոլորին,
Ամռան այրող շոգ օրերին:
Իսկ ձմռանն էլ, լավ իմանաս,
Փայտ է տալիս, որ տաքանաս:
Ծառը բարիք է մշտապես,
Միրգ է տալիս թե՛ ինձ, թե՛ քեզ:
Նա դառնում է տախտակ, գերան,
Որ դուռ շինես ու պահարան:



1. Քո կարծիքով ինչ է նշանակում ***սիրել բնությունը***:
2. Ինչ գիտես ծառի խնամքի մասին:
3. Ինչ ես կարծում կարող է արդյոք բույսը լինել ***ծարավ***, ***սոված*** կամ ***մրսած***: Բացատրի՛ր և ասա՛, թե ինչպես կօգնես նրանց:

4. Քննարկե՛ք և ներկայացրե՛ք.

- ինչո՞վ են զբաղվում անտառապահը, այգեպանն ու բանջարաբույծը,
- ո՞ր գործով կնախընտրեք զբաղվել դուք: Ինչո՞ւ:

5. Լրացրո՛ւ աղյուսակը

Պտուղը	***խնձոր***		***ծիրան***		***ընկույզ***
Ծառը	***խնձորենի***	***տանձենի***		***դեղձենի***	

- Ի՞նչ նկատեցիր՝ ինչո՞վ են նման երկրորդ շարքի բառերը:

6. Թվարկի՛ր պտղատու այլ ծառերի անուններ ևս ու գրի՛ր:

7. Տրված բառերը խմբավորի՛ր աղյուսակի համապատասխան սյուներում. ***լոլիկ***, ***խնձոր***, ***ելակ***, ***վարունգ***, ***ծիրան***, ***դեղձ***, ***մասուր***, ***մորի***, ***սմբուկ***, ***մոշ***, ***տանձ***, ***պղպեղ***, ***բալ***, ***հաղարջ***, ***կաղամբ***, ***սալոր:***

Միրգ	***Բանջարեղեն***	***Հատապտուղ***

8. Կարդացեք Ղազարոս Աղայանի «Ծառերի գանգատը» ստեղծագործությունից այս հատվածը:

Մեր փված փայտից կրակ են անում, փունը փաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

9. Գրեք մի նամակ ուղղված ծառերին և ներկայացրեք, թե ինչպես են շատ մարդիկ հոգ տանում և խնամում ծառն ու ծաղիկը: Ի՞նչ են անում նրանք բնությունը պահպանելու համար:

10. Կազմի՛ր նախադասություններ այս նկարների շուրջ և գրի՛ր:

11. Հարցեր պատրաստիր պարզելու համար, թե ինչ է տոհմածառը.

- ծառի վերին ճյուղին փակցրու քո լուսանկարը կամ գրիր քո անունն ու ազգանունը,
- անմիջապես դրա տակ փակցրու ծնողներիդ լուսանկարներն ու գրիր նրանց անունները,
- հետո հերթը քո ծնողների ծնողներինն է. ներկայացրու քո տատիկներին ու պապիկներին:



12. Հետազոտեք, թե ինչպես են ստանում թուղթը.

- ինչպե՞ս ու որտեղ են օգտագործում թուղթը,
- ինչո՞ւ է կարևոր խնայողաբար գործածել թուղթն ու թղթից պատրաստված իրերը,
- թուղթը խնայողաբար օգտագործելու կանոններ մշակեք,
- ձեր հետազոտության արդյունքները ներկայացրեք պաստառով:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ԵՂՋԵՐՈՒՆ

(Բարոն Մյունհաուզենի արկածները)

Ռուդոլֆ Էրիխ Ռասպե

Ասենք՝ ինձ հետ ավելի հրաշք բաներ էլ են պատահել:

Քայլում էի մի օր անտառով և անուշ անում գնածս բալը: Հանկարծ դիմացս մի եղջերու դուրս եկավ՝ ամրակազմ, գեղեցիկ, ճյուղավոր պոզերով: Իսկ մոտս՝ ոչ մի գնդակ: Եղջերուն հանգիստ կանգնել նայում էր ինձ. կարծես գիտեր, որ հրացանս դատարկ է: Բախտիցս մոտս մի քանի բալ էր մնացել, և հրացանս լիցքավորեցի կորիզներով: Այո՛, այո՛, մի՛ ծիծաղեք: Հրացանիս փամփշտակալը լցրի սովորական կորիզներով:

Հրացանը թնդաց, բայց եղջերուն միայն գլուխը թափահարեց: Կորիզը կպավ ճակատին և ոչ մի վնաս չտվեց:

Մի վայրկյանում նա անհետացավ թավ անտառում:

Ես ափսոսացի, որ այդպիսի գեղեցիկ կենդանուն ձեռքիցս բաց թողեցի:

Մի տարի հետո նորից որսի էի գնացել: Իհարկե, այդ ժամանակ ես բալի կորիզի պատմությունը բոլորովին մոռացել էի:

Ա՜յ քեզ զարմանք, անտառի խորքից ուղիղ դիմացս հայտնվեց մի հրաշալի եղջերու՝ գլխին մի մեծ ծառ:

Իսկույն գլխի ընկա, որ այդ ծառը աճել է բալի այն փոքրիկ կորիզից, որով անցյալ տարի ես լիցքավորել էի հրացանս և կրակել եղջերուի վրա:

Ծառը ծածկված էր խոշոր, հասուն բալերով:

Պետք է խոստովանել, որ այդպիսի համեղ բալ կյանքումս չէի կերել:

1. Ինչն այս պատմության մեջ զարմացրեց կամ զվարճացրեց քեզ:
2. Ովքե՞ր են որսորդները և ինչո՞վ են նրանք զբաղվում:
3. Բնութագրի՛ր որսորդին:
4. Վայրի կենդանիներ տեսե՞լ ես: Որտե՞ղ:
5. Ինչպե՞ս կվարվեիր դու, եթե այգում կամ անտառում զբոսնելիս եղջերու տեսնեիր:

6. Քննարկեք և ներկայացրեք, թե ինչն է ձեր կարծիքով այս հեքիաթում հորինված, իսկ ինչը կարող է իրական լինել:

Երևակայական

Իրական

7. Ըստ հեքիաթի՝ նկարագրիր եղջերուին մեկ տարի առաջ և մեկ տարի հետո: Փորձիր նաև նկարել:

✸ Ներկայացրու այդ փոփոխությունները:

8. Դու որսորդին հանդիպել ես այն պահին, երբ հրացանը ձեռքին պատրաստվում էր կրակելու: Ի՞նչ կասեիր նրան:

✸ Գրի՛ր առ ձեր երկխոսության ձևով.

- Ես ...

- Որսորդը...

- Ես ...

9. Արտագրիր նախադասությունները: Յուրաքանչյուրի դիմաց գրիր բառերի քանակը.

1	***Այգում աճում են պտղատու ծառեր:***	
2	***Գույնզգույն թիթեռները թռչկոտում են ծաղկից ծաղիկ:***	
3	***Դեղին տերևները պտտվելով թափվում են ծառերից:***	
4	***Թռչունները երամներով չվում են տաք երկրներ:***	

✸ Համառոտիր տրված նախադասությունները և յուրաքանչյուրի դիմաց կրկին գրիր բառերի քանակը.

օրինակ՝ ***Թիթեռները թռչկոտում են:*** *(երեք բառ)*

Ստացվեց ***համառոտ*** *նախադասություն: Իսկ աղյուսակում գրված նախադասություններն* ***ընդարձակ*** *են:*

10. Նշված բառերով համառոտ նախադասություններ կազմի՛ր, ապա դրանք դարձրո՛ւ ընդարձակ.

եղջերու, որսորդ, անտառ, խիտ, հրացան, փամփուշտ, հատապտուղ:

Հուշում

Նախադասությունն սկսում ենք մեծատառով:

Նախադասության վերջում դնում ենք վերջակետ:

11. Հորինե՛ք մի պատմություն «Զգուշացի՛ր, որսորդ» վերնագրով և ներկայացրե՛ք:

Ուրախ հեքիաթներ

12. Տրված առարկաներից որո՞նք քեզ պետք կլինեն որսորդության գնալիս: Գրի՛ր դրանց անվանումները և տեղավորի՛ր «ուսապարկիդ» մեջ:

13. Հորինեք՝ «Ի՞նչ կլիներ, եթե...» սկիզբն ունեցող պատմություն:

- Տարբեր իրեր, առարկաներ, երևույթներ կամ կենդանիներ պատկերող քարտերը շրջված դրեք սեղանին:
- Վերցրեք պատահական երկու քարտ և փորձեք պատահական բառերի զուգորդմամբ պատմության թեմա առաջարկել:

Օրինակ՝ ***կոկորդիլոս, դուռ***

«Ի՞նչ կլիներ, եթե ձեր դուռը մի կոկորդիլոս թակեր և ուրց խնդրեր»:

* * *

Համո Սահյան

Ձկնիկն առվին խուտուտ տվեց
Եվ առուն՝ պարզ ու անբիծ,
Քրքջալով ուշաթափվեց ու ցած ընկավ քարափից...
Զարկվեց քարին, ուշքի եկավ,
Շուրջը նայեց կասկածով
Եվ մի կապույտ ժպիտ շուրթին,
Ճամփա ընկավ դեպի ծով:

շուրջ

քարափ

անբիծ

կասկած

1. Վերնագրիր բանաստեղծությունը:
2. Ինչից ուշաթափվեց առուն:
3. Ո՞ւր հասավ ձկնիկն առվի հետ:
4. Նկարագրիր առվի ճանապարհը դեպի ծով:
5. Կարող է արդյոք ձկնիկը նորից առվակ վերադառնալ: Ի՞նչ ես կարծում՝ ինչպե՞ս:
6. Արձակ շարադրիր բանաստեղծության բովանդակությունը:

7. Քննարկեք այս երկու ձկների ապրելակերպը:
8. Կազմեք և ներկայացրեք երկխոսություն ջրարանում և ծովում ապրող ձկնիկների միջև:





9. Խմբավորեք կենդանիների անուններն ըստ այս գծապատկերի.

կրիա, ձուկ, գայլ, ութոտնուկ, մողես, աղվես, նապաստակ, գորտ, կոկորդիլոս, խեցգետին:



- Համեմատեք նրանց ապրելակերպը:
- Ինչո՞վ են նման:
- Ինչո՞վ են տարբեր:

10. Ընդարձակի՛ր **«Ձկնիկը լողում է:»** համառոտ նախադասությունը՝ պատասխանելով հարցերին.
- (ինչպիսի՞) ձկնիկը լողում է,
- (ինչպիսի՞) ձկնիկը լողում է (որտեղ):

- Կազմիր ևս երկու համառոտ նախադասություն և ընդարձակիր դրանք:

11. Տրված բառերը ո՞ր հարցին են պատասխանում.

առու, ձկնիկ, ծով, ճամփա, զարկվել, քրքջալ, լողալ:

Ի՞նչ ***Ի՞նչ անել***

12. Երևակայական կենդանիներ հորինեք և անվանեք՝ միավորելով այս պատկերները:



- Պատրաստեք հաղորդում նրանց մասին:
- Հորինեք մի հեքիաթ նրանց մասնակցությամբ:

ԱՆՁՐԵՎԸ

Դոնալդ Բիսեթ

Երկնքում ապրում էին երկու ամպիկ: Մեկի անունը Չարաճճի էր, իսկ մյուսինը՝ Ուրախիկ:



Նրանք սլանում էին բարձր ու չէին խանգարում, որ արևը շողա, թռչունները երգեն, երեխաները խաղան:



- Չարաճճի՛,- ասաց Ուրախիկը,- չիջնե՞նք ներքև և բոլորին մի լավ թրջենք:

- Ճի՛շտ է, թե չէ պարապ-սարապ թռչելը ձանձրալի է:

Նրանք իջան և գետինը թրջեցին: Բայց մարդիկ դժգոհ էին:

- Ի՜նչ վատ եղանակ է,- ասում էին նրանք:

- Կարծես վերևից դույլով ջուր թափեն, ա՛յ քեզ անհաջող օր:

- Դե՛, եթե մենք նրանց դուր չենք գալիս, թռչենք այստեղից, - ասաց Ուրախիկը:

Նրանք թռան, և անձրևը կտրվեց: Բոլորը շատ գոհ էին: Ամեն օր շողում էր արևը, և օրեցօր շոգն ուժեղանում էր: Երկար ժամանակ անձրև չէր գալիս: Խոտերը դեղնել և չորացել էին, ծաղիկները՝ թոշնել:

Կովերը մնացել էին առանց խոտ և կաթ չէին տալիս: Պաղպաղակ պատրաստողը չէր կարողանում կաթ գնել, որպեսզի պաղպաղակ պատրաստեր: Իսկ երեխաները լացում

էին և պաղպաղակ ուզում: Մարդիկ հագան բաճկոնները, բացեցին անձրևանոցները և դուրս եկան փողոց: Այդ տեսնելով՝ ամպիկները զարմացան:

- Իջնենք, տեսնենք՝ ինչ է պատահել:

Նրանք իջան ներքև, ու նորից տեղաց հորդ անձրև:

- Ինչ հաճելի անձրև է, - ուրախացան բոլորը:

- Վերջապես: Ա՛յ հաջողակ օր:

Բոլորը շատ գոհ էին՝ և Ուրախիկն ու Չարաճճին, և երեխաներն ու մեծահասակները:

1. Ովքե՞ր էին Ուրախիկն ու Չարաճճին:
2. Ինչո՞ւ Ուրախիկի ու Չարաճճիի ներկայությունը մի դեպքում ուրախացրեց, մյուս դեպքում տխրեցրեց մարդկանց:
3. Ի՞նչ կլիներ, եթե Չարաճճին ու Ուրախիկը վիրավորվեին մարդկանցից ու ընդմիշտ անհետանային:
4. Ի՞նչ է անձրևը:
5. Երբևէ դժգոհե՞լ ես եղանակից: Ինչո՞ւ:

6. Գրի՛ր պայծառ արևի ու սև մութ ամպերի միջև երկխոսությունը:





7. Ըստ նկարի՝ պատմեք ջրի շրջապտույտի մասին:



8. Նկարներին համապատասխան՝ կազմիր պարզ ընդարձակ նախադասություններ և գրիր:

9. Բացատրիր քո օգտագործած կետադրական նշանները:



10. Հեռուստացույցով լսել ես, որ անձրև է գալու.

- գրիր՝ ինչպես կհագնվես և ինչ իրեր կվերցնես քեզ հետ:

11. Ըստ նկարների՝ մի պատմություն հորինեք.

- մնջախաղով ներկայացրեք ձեր հորինածը՝ շեշտելով նկարների բովանդակությունը:

12. Կազմակերպեք բանավեճ՝ ըստ տրված քայլաշարի:

- Խմբի անդամներից յուրաքանչյուրին հանձնարարեք հանդես գալ արևի, անձրևի, քամու կամ ամպի անունից:
- Յուրաքանչյուրը պետք է ներկայացնի «իր» կարևորությունն ու բարի գործերը:
- Քննարկման արդյունքները ներկայացրեք պաստառի միջոցով:

ԱՌԱՎՈՏ

Ալեքսանդր Պուշկին

Բացվեց այգը արևելքում
Շողալով,
Գետի այն կողմ լույսերը հանգան
Դողալով:
Ծաղկանց վրա ցողը իջավ դաշտերում:
Շարժվեց հոտը կանաչ, փափուկ
Հանդերում:
Ճամփա ընկան մեգ ու մշուշ
Դեպ ամպեր:
Սագերն ելան շորորալով
Դեպ խոտեր:
Զարթնեց գյուղը, մարդիկ դաշտ են
Շտապում:
Ծագեց արև, երկրին իջավ
Խնդություն:



1. Ըստ բանաստեղծության՝ նկարագրիր, թե ինչպես է բացվում առավոտը գյուղում:
2. Քո կարծիքով տարվա ո՞ր եղանակն է նկարագրվում բանաստեղծության մեջ:
3. Ինչու՞ էին մարդիկ դաշտ շտապում:
4. Ինչպես կբացատրես «Ծագեց արև, երկրին իջավ խնդություն» արտահայտությունը:

5. Ի՞նչ կպատմեն մեկմեկու, եթե հանդիպեն առավոտն ու երեկոն (վերջալույսն ու արշալույսը):

6. Ներկայացրե՛ք երկխոսությունը դերերով:

7. Ներկայացրե՛ք, թե ինչ եք անում սովորաբար առավոտյան և երեկոյան ըստ օրվա ձեր ռեժիմի:

8. Նշված բառերն օգտագործի՛ր պարզ ընդարձակ նախադասությունների մեջ.

առավոտ, կեսօր, երեկո, գիշեր:

✸ Համառոտի՛ր այդ նախադասությունները:

9. Օգտվելով բառարանից՝ գրի՛ր տրված բառերին իմաստով մոտ բառեր.

այգ, արև, խնդություն, հանդ, մեգ, զարթնել:

10. Քննարկե՛ք, պատասխանե՛ք ***առավոտ***, ***կեսօր***, ***երեկո*** ու ***գիշեր*** բառերին վերաբերող հարցերին և մեկնաբանե՛ք.

✸ Ի՞նչ գույն ունեն:
✸ Ինչ համ ունեն:
✸ Ի՞նչ հոտ ունեն:
✸ Ի՞նչ ծաղկի են նման:
✸ Ի՞նչ կենդանու են նման:
✸ Ի՞նչ բնավորություն ունեն:

11. Կազմի՛ր օգտակար ու կարևոր գործերիդ ժամանակացույցը մեկ շաբաթվա համար՝ մանրամասն նշելով նաև ժամերը:

Ժամանակացույց

Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
Ժ.	Ժ.	Ժ.	Ժ.	Ժ.	Ժ.	Ժ.

12. Օրվա ռեժիմից առանձնացրու՛ այն գործերը, որ սովորաբար կատարում ես առավոտյան և երեկոյան:



13. Պատկերացրեք, որ **աքաղաղն** ու **զարթուցիչը** հանդիպել և զրուցում են այն մասին, թե ով ինչ կարող է անել:

✸ Կազմեք երկխոսություն և դերերով ներկայացրեք:



14. Դիտեք օրվա պահերը նկարագրող նկարները:

- Ըստ «առավոտ», «կեսօր», «երեկո», «գիշեր» բառերի՝ բաժանվեք խմբերի.
- հինգ որպե ժամանակահատվածում օրվա տվյալ պահին առնչվող բառեր գրեք,
- յուրաքանչյուր խումբ ընթերցի իր գրած բառերը,
- լրացրեք բառերի շարքերը մյուս խմբի անդամների առաջարկած այլ բառերով,
- նկարեք օրվա համապատասխան պահերը, կից ներկայացրեք նկարագրական տեքստ՝ ստեղծված բառահումքով,
- կազմակերպեք ցուցադրություն և ներկայացրեք ձեր աշխատանքները:

Ո՞ՒՄ ՀԱՄԱՐ Է ԽՆՁՈՐԸ

Արևշատ Ավագյան



- Ինչ դարձա ես վերջապես-, սաղարթի միջից ինքն իրեն հարցնում է կարմրաթուշ խնձորը:
- Իմ բերքն ու բարիքը,- շշնջում է ծառը:
- Իմ բեռը,- մրմնջում է ճյուղը:
- Իմ ավարը,- փսփսում է քամին:
- Իմ կերակուրը,- ճղճղում է կաչաղակը:



- Ինչ դարձա ես վերջապես,- նորից է հարցնում կարմրաթուշ խնձորը՝ տերևների միջից շուրջը նայելով:
- Վերև ելած իմ երազը,- ասում է հողը:
- Իմ անմահական պտուղը,- ավելացնում է երկինքը:
- Իմ գլխին կախված փորձանքը,- խոտերի միջից ձայն է տալիս մրջյունը:
- Իմ կյանքն ու կացարանը,- պատասխանում է որդը ներսից:



1. Ինչ հարց էր հետաքրքրում կարմրաթուշ խնձորին:
2. Ումից նա պատասխաններ ստացավ:
3. Խնձորը ստացավ իրեն հուզող հարցի պատասխանը:
4. Քո կարծիքով ինչո՞վ է խնձորը կարևոր մարդու համար:

5. Քննարկեք և ներկայացրեք, թե ինչպես է սերմը դառնում խնձոր:
6. Որտեղից են խնձորի սերմերը:
7. Ինչ բույսերի սերմեր գիտեք, որոնցից կերակուր են պատրաստում:



8. Պատրաստիր տեղեկություն խնձորի կիրառության ձևերի և օգտակար հատկությունների մասին:



Հեքիաթներ պտուղների մասին

9. Ասա՝ ո՞վ ես դու՝

- տատիկի համար
- մայրիկի համար
- ուսուցչի համար
- ընկերոջ համար
- անծանոթի համար

10. Փորձի՛ր ինքնուրույն շարունակել հարցերի այս շարքը և պատասխանել դրանց:

11. Քննարկեք և մեկնաբանեք պատմվածքից դուրս գրված *«հողի համար խնձորը* ***վերև ելած երազ է»***, իսկ ***«երկնքի համար՝ անմահական պտուղ»*** արտահայտությունները:

12. Վանկատի՛ր նշված բառերը.

շշնջալ, մրմնջալ, փսփսալ, ճղճղալ

- Բացատրի՛ր բառերը և որոշի՛ր. թե ի՞նչ հարցի են պատասխանում դրանք:

13. Հաշվի՛ր՝ քանի՞ տառ և քանի՞ հնչյուն կա հետևյալ բառերում.

երազ, երկինք, փերև, որդ, մրջյուն:

- Բառերն օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

14. Մեկնաբանի՛ր՝ որտեղ ես կարդացել այս արտահայտությունները և ի՞նչ են դրանք նշանակում՝

«Կար, չկար...»

«Ժուկով, ժամանակով...»

«Ես իմ պապից եմ լսել, նա էլ՝ իր պապից...»

«Երկնքից երեք խնձոր ընկավ...»

15. Բացատրիր՝ «Ո՞ւմ համար է խնձորը» պատմվածքի հերոսներից ովքեր են խնձորի իրական բարեկամները.

ծառ	***կաչաղակ***
ճյուղ	***երկինք***
քամի	***մրջյուն***
հող	***որդ:***

16. Գրիր անհրաժեշտ բառերը:



17. Դիտարկեք սերմի ծլարձակումը:

18. Դասասենյակում փոքրիկ արկղիկների մեջ կամ դպրոցի շրջակայքի որևէ փոքր հողատարածքում սերմեր ցանեք.

- օրացույց պահեք,
- նշեք ջրելու, հողը սնուցելու օրերը,
- նշեք ծլարձակման առաջին օրը,
- պարբերաբար չափեք ծլած բույսի աճի չափը,
- նկարագրեք փոփոխությունները,
- արդյունքների վերաբերյալ զեկույց պատրաստեք և ներկայացրեք:

ՉՈՐՍ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Կոնստանտին Ուշինսկի

Ձմեռ էր: Արամը ձնագնդի խաղաց, սահնակով սղղաց, կարմրած տուն եկավ և ասաց հորը.

- Հայրիկ, ինչ լավ եղանակ է ձմեռը: Ես կուզենայի, որ միշտ ձմեռ լիներ:

Հայրիկն Արամի այս ցանկությունը գրեց իր նոթատետրում:

Եկավ գարունը: Արամը վազվզեց գույնզգույն թիթեռների հետևից, ծաղիկներ քաղեց, ուրախ-ուրախ տուն եկավ ու ասաց հորը.

- Ինչ հրաշալի եղանակ է գարունը: Ես կուզենայի, որ միշտ գարուն լիներ:

Արամի այս ցանկությունն էլ հայրիկը գրեց իր նոթատետրում:

Եկավ ամառը: Արամը հայրիկի հետ դաշտ գնաց, հատապտուղ հավաքեց, հոտավետ խոտերի մեջ թավալվեց: Երեկոյան տուն դարձավ ու ասաց հորը.

- Ես կուզենայի, որ ամառը վերջ չունենար:

Հայրիկն Արամի այս ցանկությունն էլ գրեց իր նոթատետրում:

Վրա հասավ աշունը: Այգում հավաքվեցին վարդագույն խնձորները, տանձերը: Արամը հիացած տուն եկավ ու ասաց հորը.

- Աշունը բոլոր եղանակներից լավն է:

Այդ ժամանակ հայրիկն իր նոթատետրը բացեց և ցույց տվեց Արամին, որ նա միևնույն բանն է ասել և՛ ձմռան, և՛ գարնան, և՛ ամռան, և՛ աշնան մասին:

1. Տարվա ո՞ր եղանակն էր սիրում Արամը:
2. Քո կարծիքով ինչո՞ւ էր հայրիկը նոթատետրում անընդհատ գրառումներ կատարում:
3. Ի՞նչ մտքեր տվեցին հայրիկի գրառումները Արամին:
4. Ըստ քեզ՝ տարվա ո՞ր եղանակն է ամենալավը:
5. Ասացեք յուրաքանչյուր նկարին համապատասխան տարվա եղանակը:

6. Օգտվելով պատկերից՝ բացատրեք, թե տարվա ինչ եղանակ կարող է լինել կիսագնդերից յուրաքանչյուրում:



7. Քննարկեք և փորձեք տարվա եղանակներին ևս մեկ եղանակ ավելացնել՝ հինգերորդը: Ինչպիսին կլինի այն ըստ ձեզ:

8. Տեքստից դուրս գրված բառերը բաժանիր բաղադրիչների.

ձնագնդի, ծոցատեսր, գույնզգույն,
հատապտուղ, վարդագույն:

9. Առանձին սյունակներում գրիր նշված բառերին իմաստով մոտ և իմաստով հակառակ բառեր.

գույնզգույն, հրաշալի, ուրախ, հոտավետ:

10. Պատասխանիր հարցերին.

- ո՞ր ամսին ես ծնվել,
- ո՞րն է քո սիրելի եղանակը,
- ո՞ր եղանակին է սկսվում նոր ուսումնական տարին,

- ո՞րն է տարվա ամենացուրտ եղանակը,
- ո՞րն է տարվա ամենաշոգ եղանակը,
- ի՞նչ տոներ ենք նշում տարվա տարբեր եղանակներին:

11. Աղյուսակում գտի՛ր տարվա եղանակներին բնորոշ բառեր և գրի՛ր:

ա	ս	ի	կ	ա	ն	ձ	ր	և	ն	կ	լ	պ	օ	գ
ս	դ	ֆ	գ	մ	լ	ն	դ	փ	ո	թ	ո	ր	ի	կ
մ	ս	տ	ա	պ	դ	ա	ֆ	ռ	տ	յ	կ	լ	մ	ա
ա	ս	դ	ֆ	ր	բ	բ	հ	յ	ի	կ	մ	լ	դ	յ
ս	դ	ո	ր	ո	տ	ու	գ	հ	ռ	տ	ո	ի	ն	ձ
ա	ս	դ	ֆ	պ	վ	ք	հ	ն	յ	կ	լ	ի	օ	ա
ա	ֆ	տ	հ	ձ	ի	ա	ձ	ա	ն	գ	հ	լ	ի	կ
տ	ե	ր	և	ա	թ	ա	փ	թ	գ	պ	հ	ա	ս	ք
ա	դ	ֆ	գ	ի	կ	լ	մ	կ	ա	ր	կ	ու	տ	ա
ղ	խ	գ	ֆ	մ	ե	գ	ս	գ	հ	յ	մ	բ	ց	ա

12. Ներկայացրեք համառոտ տեղեկություն եղանակի տեսության մասին.

- ի՞նչ է եղանակի տեսությունը:
- ի՞նչ կարևոր տեղեկություն եք ստանում եղանակի տեսությունից:
- ո՞մ համար է հատկապես կարևոր եղանակի տեսությունը:
- հետևո՞ւմ եք արդյոք եղանակի տեսությանը:

13. Ավարտի՛ր նախադասությունները.

Ձմռանը դաշտերը...:

Ծառերի վրա հասունանում են...:

Սաղարթախիտ անտառը...:

Ծովափում երեխաները...:



14. Քննարկե՛ք և ներկայացրե՛ք ձեր կարծիքները.

- ի՞նչ են զգում բույսերն ու կենդանիները տարվա տարբեր եղանակներին,
- տարվա ո՞ր եղանակին են իրենց ավելի լավ զգում թռչունները:

15. Պատրաստե՛ք զեկույց տարվա եղանակների կերպարներով (***Գարունը, Ամառը, Աշունը, Ձմեռը***).

- խմբի անդամներից յուրաքանչյուրը տարվա եղանակներից մեկի անունից զեկուցում է տարվա ընթացքում իր կատարած գործերի մասին,
- յուրաքանչյուր զեկույցից հետո խմբի անդամները հարցեր են տալիս զեկուցողին:

Հուշում՝

զեկույցների համար օգտագործեք նկարներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և այլ նյութեր:

Հեքիաթներ բնության երևույթների մասին

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ներկայացրու քո իրավունքներն ու պարտականությունները բնության մեջ

Իրավունքներ ***Պարտականություններ***

_____

2. Քայլերի այս հերթականությամբ գրելու այսպիսի մի փոքր կատարիր.

- Գրիր բնության որ երևույթի, կենդանու կամ բույսի մասին ես ուզում պատմել:
- Գրիր տարբեր վերնագրեր և ընտրիր դրանցից մեկը:
- Գրիր վերնագրի հետ կապված որոշ հետաքրքիր գաղափարներ:
- Գրիր այն հարցերը, որոնց պատասխանները պետք է դեռ փնտրես պատմությունդ ավելի հետաքրքիր դարձնելու համար: Կարդա՛, հարցրու, ուսումնասիրիր:
- Գրիր ամբողջական պատմությունը:

Հիշիր

Նախադասությունն արտահայտում է ամփոփ միտք և ցույց է տալիս առարկան և նրա կատարած գործողությունը:

Ծառերը գարնանը ծաղկում են:

Գեփակը քչքչալով հոսում է:

Պարզ համառոտ նախադասությունը կազմված է միայն առարկա և գործողություն ցույց տվող բառերից:

Թռչունները չվում են: ***Օրերը փաքանում են:***

Պարզ ընդարձակ նախադասությունը կազմված է առարկա, գործողություն ցույց տվող և այլ բառից ևս:

Թռչունները չվում են փաք երկրներ:

Օրերը կամաց-կամաց փաքանում են:

ԲԱՌԱՑԱՆԿ

այգ	*արևածագից առաջ, վաղ առավոտ*
անբիծ	
անպայման	
ավար	*թալան, կողոպուտ*
բարիք	*այն ամենը, ինչ որ լավ է, դրական և օգտակար*
գերան	*ծառի ճյուղերը մաքրած մեծ ծառաբուն*
գույնզգույն	*բազմագույն, երփներանգ*
դժգոհ	
զարթնել	
թրջվել	
լիցքավորել	*էլեկտրական էներգիա հաղորդել մի բանի*
կասկած	*անվստահություն*
կացարան	*ապրելու տեղ, բնակարան*
հորդ	*վարար*
մարդիկ	
մեգ	*մշուշ, մառախուղ*
նոթատետր	*գրառումների տետր*
շուրթ	*շրթունք*
որդ	
սերմ	*ցանելու համար սերմացու*
սողալ	
վայրկյան	
վերև	
տախտակ	
փամփշտակալ	*հրացանի (ատրճանակի) փամփուշտի համար գոտուն կապելու պայուսակ*
քարափ	*գետի, ծովի, լճի քարաժայռից բաղկացած ափ*
օգուտ	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եկեք՝ տանեմ 4
Հայաստանյան խաճանկար 4
Իմ հայրենիքը, *Սուրեն Մուրադյան* 10
Անուշ անուններ, *Յուրի Սահակյան* 14
Քո տունը, *Լիպարիտ Սարգսյան* 18
Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը 21
Նյուտոնի թիկնոցը 24
ԱՄՓՈՓՈՒՄ 28
ԲԱՌԱՑԱՆԿ 29

Մի տանիքի տակ 30
Ես իմ բաժին երկինքն եմ պահում 30
Ամենից լավ տունը, *Հովհաննես Թումանյան* 34
Ինչքա՞ն է կշռում մի փաթիլ ձյունը, *Դեյվիդ Բլոկ* 39
Ո՞րն է լավ, *անգլիական հեքիաթ* 43
Մեկ և յոթ, *Ջանի Ռոդարի* 47
Տարբեր, բայց նույնը, *Ֆերիդոն Օրա* 51
ԱՄՓՈՓՈՒՄ 57
ԲԱՌԱՑԱՆԿ 58

Թե ինչու... 59
Եթե ուզում ես, *Ջանի Ռոդարի* 59
Սիրիր կանաչը, *Խաչիկ Դաշտենց* 63
Արտասովոր եղջերուն, *Ռոդոլֆ Էրիխ Ռասպե* 67
Ձկնիկն առվին խուտուտ տվեց, *Համո Սահյան* 72
Անձրևը, *Դոնալդ Բիսեթ* 75
Առավոտ, *Ալեքսանդր Պուշկին* 79
Ո՞ւմ համար է խնձորը, *Արևշատ Ավագյան* 83
Չորս ցանկություն, *Կ. Ուշինսկի* 87
ԱՄՓՈՓՈՒՄ 92
ԲԱՌԱՑԱՆԿ 93

Անահիտ Արնաուդյան Մարինե Մանուկյան

ՄԱՅՐԵՆԻ 2

II ՄԱՍ

Նկարիչ՝
Նաիրա Ահարոնյան
Սրբագրիչ՝
Մարգարիտ Արիստակեսյան
Համակարգային ձևավորումը՝
Ալվարդ Օհանջանյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am